ՋՈՆ Ա. Ք. ԳՐԵՊԻՆ

Կյանքի 79-րդ տարում իր մահկանացուն կնքեց հայ լեզվաբանության լավագույն ուսումնասիրողներից մեկը՝ ամերիկացի հայագետ Ջոն Ա. Ք. Գրեպինը:

Գիտական աշխատանքի առաջին իսկ տարիներից նրա հետաքրքրությունների ոլորտում էին հայագիտության խնդիրները, մասնավորապես հայերենի նախագրային և գրավոր շրջանի պատմության, կիլիկյան շրջանի գրավոր աղբյուրների լեզվի քննության հարցերը: Համեմատական լեզվաբանության մեթոդիկայի կիրառմամբ նա անդրադարձել է դասական գրաբարի և միջին հայերենի հնչույթային համակարգի, բառապաշարի և ձևաբանության հանգուցային իրողություններին՝ տալով բավականին ուշագրավ մեկնաբանություններ:

Նրա ուսումնասիրության ոլորտում էին հայ-բալթյան, հայ-խեթալուվական, հայ-հնաբալկանյան, հայ-իրանական լեզուների առնչությունների հարցերը: Ըստ այդմ լույս են տեսել հարյուրներից անցնող արժեքավոր հոդվածներ, գրախոսություններ, գրվել են շուրջ մեկ տասնյակ գրքեր:

Հայտնի լեզվաբանի աշխատանքները լույս էին տեսնում տարբեր լեզուներով (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և այլն), արտասահմանյան և հայերեն ակադեմիական ամսագրերում, որոնք նրան մեծ ճանաչում բերեցին հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում:

Գրեպինը միջազգային հայագիտական գրեթե բոլոր կոնգրեսների մասնակից էր: Գնահատելի են այն ծառայությունները, որ նա մատուցել է հայերենագիտությանը:

Շուրջ 25 տարի նա խմբագրեց և հրատարակեց անգլերեն լեզվով «Հայ լեզվաբանության տարեգիրք» («Annual of Armenian Linguistics») հանդեսը, որի խմբագրական կազմում էին անվանի լեզվաբաններ ոչ միայն արտասահմանից, այլև Հայաստանից: Հանդեսը ներկայացնում էր օտարազգի հայագետների՝ հայերենին նվիրված աշխատանքները, օտար ընթերցողներին ծանոթացնում հայագիտության վերջին նվաճումներին: Անխոնջ մտավորականը ոչ միայն հայերենի իրողություններն էր ներկայացնում օտարներին, այլև նրանց մատուցում բանաստեղծության գոհարները ընդգրկող ժողովածուները: